«Էդիթ Պրինտ » հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեական դաստիրակության հարցերում

Հաստատություն՝ <<Երևանի հ. 34 մսուր-մանկապարեզ>>

Դաստիարակ՝ Եղիազարյան Աննա

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2023

Բովանդակություն

1. ներածություն.....2
2. նախադպրոցական հաստատությունների և ընտանիքի փոխադարձ կապը.....4
3. Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը՝ որպես երեխայի զարգացման գրավական.....6
4. ժողովների անցկացման ուղենիշեր.....9
5. Եզրակցություն.....13
6. Գրականության ցանկ 14

Ներածություն

Ընտանիքն ու մանկապարտեզն ունեն իրենց առանձնահատուկ դերը, չեն կարող փոխարինել միմյանց : Հաջողության պայմանն է՝ վստահության գործարար կապերի հաստատումը, ճշտել ծնողների և մանկավարժների դաստիարակչական դիրքորոշումը, որը չափազանց կարևորում է 5-6 տարեկաններին դպրոցին նախապատրաստելու համար: Ծրագիրը հստակ շեշտադրում է ծնողների դերը մանկապարտեզի կյանքում: Նրանց պետք է ընդունել որպես դաստիարակների և դասվարների դաշնակցի ուսուցման և դաստիարակության գործը ճիշտ կազմակերպելու, երեխաներին անհրաժեշտ գիտելիքների, ինչպես նաև արժեքների փոխանցման գործում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Ծնողների հետ համագործակցությունը նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Այդ համագործակցությունից շահում է, թե՛ երեխան, թե՛ ընտանիքը, թե՛ տվյալ հաստատությունը: Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հասակակիցների մասին: Այդ տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխաի շահերին: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին ինքնուրույն հասնել հաջողության: Նախադպրոցական տարիքի յուրահատկությունների սպառիչ բնութագիրը տվել է Վ.Վ. Դավիդովը. "Նախադպրոցական տարիքը ինքնագնահատող է... այն երեխային թույլ է տալիս իրականացնել ազատ գործունեության տարբեր տեսակներ՝ խաղ, նկարչություն, զբաղվել երաժշտությամբ, լսել հեքիաթներ և պատմվածքներ, կառուցել օգնել մեծերին տանը և այգում...": Գործունեության այս տեսակները, որ երեխաներն իրականացնում են իրենց ցանկությամբ, չունեն խիստ կանոններ: Դրանց կատարման ընթացքը և արդյունքն առաջին հերթին ուրախացնում են իրենց, հետո նաև մեծերին: Դրա հետ մեկտեղ գործունեության այդ բազմազանությունը երեխաներին տալիս է բավականին շատ գիտելիքներ, կարողություններ, նույնիսկ հմտություններ, զարգացնում է նրանց մտածողությունը, երևակայությունը,

հիշողությունը, ուշադրությունը, զգացմունքները, կամքը, բարոյական հատկությունները, հասակակիցների և մեծերի հետ շփվելու ձգտումը:

Նման միջնորդավորված ձևով էլ լուծվում են նախադպրոցականների զարգացնող-կրթական խնդիրները:

Կրթական և դաստիարակչական աշխատանքների ընթացքում հետևողականորեն և ստեղծագործաբար իրականացնելով ծրագրով նախատեսված խնդիրները, դաստիարակը՝ միաժամանակ ելնելով իրադրությունից և կյանքի պայմաններից, պետք է կարողանա կողմնորոշվել և ազատորեն ընտրել ծնողների հետ կապի այս կամ այն մեթոդը, իրեն նպատակահարմար և արդյունավետ աշխատանքի ձևեր և բովանդակություն:

Նախադպրոցական կրթության կարևորագույն խնդիր է 5-6 տարեկան երեխաներին դպրոցին նախապատրաստումը:

Ծնողի և դաստիարակի համագործակցությունը նրանց ընդհանուր պարտականությունն է:

Հետազոտական աշխատանքի գլխավոր նպատակն է՝

- Ինչպե՞ս սերտացնել ընտանիք – մանկապարտեզ համագործակցությունը, որ համատեղ աշխատանքը ունենա իր դրական արդյունքը, գտնել փոխգործակցության ուղիներ, եղանակներ և ձևեր:

ԵՎ այդ փոխգործակցության արդյունավետությունով է պայմանավորված նոր սերնդի առողջ և ներդաշնակ զարգացումը:

Նախադպրոցական հաստատությունների և ընտանիքի փոխադարձ կապը

Մարդկության պատմությունն ընթացել է աճող սերնդի դաստիարակության երկու հիմնական ուղղությունների (ընտանեական և հասարակական) զուգորդմամբ: Դրանցից յուրաքանչյուրը դաստիարակության սոցիալական ինստիտուտ է՝ երեխայի անհատականության ձևավորման ուրույն մեթոդներով և միջոցներով:

Անհատի կայացման գործընթացում ո՞րն է առավել կարևոր ու առաջնայինը՝ ընտանի՞քը թե՞ մանկապարտեզն ու դպրոցը: Ոմանք կարևորում են ընտանիքի դերը: Մյուսներն առաջնություն են տալիս հասարակական հաստատություններին: Յ. Ա. Կոմենսկին մեծ տեղ է հատկացրել մայրական դպրոցին՝ առանց դասացուցակի և ընդմիջման, առանց հանգստի ու արձակուրդի մայրական դասերին:

Դիտարկենք այն գործոնները, որոնք որոշարկում են ընտանեական ուժն ու ամրությունը:

1. Ընտանեական դաստիարակությունը բնորոշվում է խոր հուզականությամբ և ինտիմ բնույթով: Դրա <<ուղեկիցներն են>>՝ զավակների հանդեպ ծնողական սերն ու պատասխան զգացումը (կապվածություն, վստահություն, քնքշություն): Ընտանեական դաստիարակության արդյունավետությունը բացատրվում է այն հուզականությամբ, որով շաղախված է ընտանիքի մթնոլորտը: Նման պարագայում երեխաներն իրենց ապահով ու պաշտպանված են զգում:

2.Դաստիարակությունն ընտանիքում դրսևորվում է ամենատարբեր իրավիճակներում: Նման շարունակական ու տևական ներգործությունն արդյունավետ է երեխայի նյարդային համակարգի ներդաշնակ ձևավորման համար: Սակայն միշտ չէ, որ ընտանեական դաստիարակությունը կարող է մանկավարժորեն գրագետ ուղղվածություն և ընթացք ունենալ:

3.Ընտանիքն ավելի լայն հնարավորություններ ունի՝ երեխային ընդգրկելու գործունեության բազմազան ու տարաբնույթ ձևերում (կենցաղային,

աշխատանքային, տնտեսական, հաղորդակցական – դաստիարակչական): Եթե մանկապարտեզում երեխային դեպքից դեպք է որևէ աշխատանք հանձնարարվում, ապա ընտանիքում այլ պատկեր է:

<<Երեխան ընտանիքի հայելին է>> արտահայտությունը զարմանալիորեն դիպուկ կերպով բնութագրում է երեխայի կողմնորոշումն այն հոգևոր և բարոյական սկզբունքների նկատմամբ, որոնք որդեգրվել են նրա հարազատների կողմից: Յուրաքանչյուր ընտանիք ունի բարու ու գթասրտության իր պատկերացումները: Եթե երեխայի շրջապատում <<թույլատրելի է>> համարվում ստի, կեղծիքի ու դաժանության առկայությունը, ապա դժվար թե այդ երեխան զերծ մնա դրանց ավերիչ ազդեցությունից:
Ընդօրինակելով մտերիմներին, սիրելի մարդկանց, հետևելով նրանց <<կենսական դասերին>>՝ երեխան աստիճանաբար յուրացնում է վարվելակերպի, փոխհաղորդակցման մշակույթը: Իզուր չէ, որ մեծ մանկավարժներն ընդգծել են, որ ընտանեական դաստիարակությունն ամենից առաջ ծնողների ինքնադաստիարակությունն է:

Պետք է նշել, որ ընտանիքները միատարր չեն: Դրանք տարբերակված են սոցիալական, տարիքային, սեռային և մասնագիտական խմբերով: Սա օգնում է, որ երեխան առավել լայնորեն դրսևորի իր հնարավորությունները: Այսպես ժամանակակից գիտությունն ընդգծում է երեխայի դաստիարակության գործում ընտանիքի առաջնային դերը: Դրան է հանգեցնում նաև կրթության բնագավառում պետական քաղաքականության փոփոխությունը:
Սակայն բոլոր ընտանիքները չէ, որ ամբողջությամբ իրականացնում են համալիր բարենպաստ ներգործություն: Պատճառները բազմազան են, որոշ ընտանիքներ չեն ցանկանում դաստիարակել, մյուսները չեն կարողանում, երրորդները չեն հասկանում դրա կարևորությունը: Բոլոր դեպքերում զգացվում է նախադպրոցական հաստատությունների օգնության անհրաժեշտությունը: Նախադպրոցական դաստիարակության ընթացող վերակառուցման հիմքում առկա են մանկավարժական աշխատանքի հումանիզացումը և ապագաղափարականացումը, երեխայի անհատականության զարգացումը: Դրանց շնորհիվ ապահովվելու են ինքնադրսևորման համար բարենպաստ պայմաններ (տաք, ընկերական

մթնոլորտ, բաց ու անկեղծ խոսակցություն, որը կօգնի երեխային՝ թե ինքն իր և թե շրջապատի հետ բայրացկամ ու ներդաշնակ ապրելու):

Կարևորվում են շփման հմտությունները, որոնց հիմքում ազատ-անկաշկանդ արտահայտվելու կարողությունն է: Երեխան իր շրջակա միջավայրի մասին շատ իմանալով և ինքնուրույն ճշտելով իր փոխհարաբերությունները՝ հեշտությամբ կարող է լուծել իր խնդիրները: Դրան կարող են օգնել նաև ընտանիքում ծագող բարդությունների լուծումները:

Մեր ապագա հասարակությանը պիտանի, արժանի քաղաքացի դաստիարակելու հաջողությունը պայմանավորված է ծնողների մանկավարժական կուլտուրայով, դրանց բարոյական բարձր գիտակցությամբ, զգացմունքներով ու վարքով:

Մեր նպատակն է խորհուրդներով օգնել ծնողներին՝ ճանաչելու իրենց և իրենց երեխաներին: Դա կարևոր նախապայման է՝ ընտանիքում երեխայի նպատակաուղղված և համակողմանի դաստիարակության կազմակերպման համար:

Երեխային համակողմանիորեն դաստիարակելու նպատակով ծնողները պետք է ունենան համապատասխան գիտելիքներ և ընտանիքում երեխաի մտավոր զարգացման անհրաժեշտ մակարդակն ապահովվելու համար իմանան պահանջվող չափանիշը, տվյալ տարիքում երեխայի մտավոր կարողությունները, որպեսզի դպրոց մուտք գործող երեխան ունենա գիտելիքների պաշար, ճանաչողական հետաքրքրություններ, սովորելու ցանկություն և այլն:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը՝ որպես երեխայի զարգացման գրավական

Ծնողերի հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում:

Այլևս կասկածից վեր է նախադպրոցական դաստիարակության հասարակայնորեն էական անհրաժեշտությունը: Միշտ էլ մանկապարտեզին ներկայացվել են բարձր պահանջներ: Վերջին տարիներին դրանք շեշտադրվում են առավելագույնս: Մանկապարտեզը գնահատվում է իր

մանկավարժական գործունեությամբ (ինչպե՞ս են դաստիարակում,ի՞նչ են սովորեցնում, ինչպե՞ս են նախապատրաստում դպրոցին): Այստեղ է, որ մանկապարտեզը ի դեմս ընտանիքի, գտնում է դաշնակից, գաղափարակից երեխայի դաստիարակության գործում:

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Ովքե՞ր պետք է լինեն դրա նախաձեռնողը: Անշուշտ մանկավարժները: Նրանք պետք է ստեղծեն ներդաշնակ ամուր կապ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է, որ ծնողները հավատ ընծայեն մանկավարժ-երեխա փոխհարաբերության, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները: Այդ վստահությունն ու հեղինակությունը հենց այնպես չեն տրվում: Դրանք պետք է վաստակի մանկավարժը:

Ծնողների հոգեբանամանկավարժական իրազեկությունը կարող են իրականացնել նախադպրոցական հաստատությունները: Այսպես վաղ տարիքի խմբերի դաստիարակը ծնողների հետ աշխատանքը նախ և առաջ բնութագրվում է հոգեբանաֆիզիոլոգիական առանձնահատկություններով, երեխայի արագ զարգացումը պահանջում է ժամանակին փոխել ուսուցման ու դաստիարակության մեթոդաբանությունը: Ծնողների հետ խորհրդատվական աշխատանքն անհրաժեշտ է կազմակերպել առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման պայմանների ստեղծման, ադապտացման հարցերի ընդգրկմամբ:

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության արդյունքում պետք է իրականացվեն հետևյալ խնդիրները.

1. Ծնողներին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցականի դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին:

2. Ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ, գնահատել նրա ձեռքբերումներն ու շտկել թերությունները:

3.Ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:

4.Աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությաբ:
Այսինքն՝ ընտանիքը ոչ թե դեպքից դեպք, այլ մշտապես տեղյակ է մանկապարտեզի ծրագրերին, գործունեությանը, մանկավարժական մոտեցումներին և մեթոդիկային:Ավելին կարող է մասնակցել, առաջարկներ անել, որոնք անպայման լսվում են, քննարկվում:
Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղությունները.

- **Շաբաթական կամ ամսական լրատուներ,** տեղկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրաված են եղել երեխաները
- **Ծնողական ժողովներ,** քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահգությունների մասին հարցեր:
- **Ծնողական համաժողովներ,** դրանց նպատակը ընտանեական դաստիարակության փորձի փոխանակումն է:
- **Առավոտյան հանդիպումների ընթացքում** ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:
- **Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին,** դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

- Գրքերի փոխանակումներ, սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով և կարդալուց հետո հավաքում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:

- Այցելություններ ընտանիք.

- Բաց դռների օրեր.

- Հարց ու պատասխանի ցերեկույթներ.
- Մանկավարժական հյուրասրահ.
- Գաղափարների տոնավաճառ.
- Վստահության հեռախոս.
- Բարի գործերի օրեր.
- Կլոր սեղան.
- Զրույցներ՝ անհատական և խմբային.
- Խորհրդատվություններ՝ անհատական ենթախմբերով և խմբային.
- Անկետավորում.
- Երեխաների ընդհանուր զննումներ.
- Փառատոներ և տոնակատարություններ.
- Սպորտային միջոցառումներ.
- Ցերեկույթներ.

Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ արդյունավետ ժողովների անցկացմանը: Դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտեն որպես մի շարունակական գործընթաց, որի ժամանակ ծնողներին տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ:
Սեպտեմբերին բոլոր խմբերում անցկացվում են ծնողների հետ հարցումներ՝ ելնելով նրանց խնդիրներից և հետաքրքրություններից: Ըստ այդմ էլ

պլանավորվում են <<Բաց դռների օր>>, <<Ընտանեական թղթի թողարկում>>, <<Ընտանեական սպորտային միջոցառումներ>>, <<Հայրիկը, մայրիկը և ես>> ու նմանատիպ այլ միջոցառումներ: ԵՎ այսպես՝ մայրերը, նաև հայրերը (ինչը հատկապես խիստ ցանկալի է), ամենագործուն մասնակցությունն են բերում նախադպրոցական հաստատությունների աշխատանքներին: Իսկ դա նպաստում է երեխաների սոցիալական վիճակի բարելավմանը: Ընտանեական պատի թերթերում կարող են տպագրվել՝ <<Ես պաշտպանում եմ առողջությունս>>, <<Նոր տարին մոտենում է>>, <<Հայրենիքի պաշտպանները>> և այլ խորագրերով հոդվածներ:

ՈՒսումնական տարվա սկզբին անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներին, կրթության և դաստիարակության պլաններին: Տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ: Ձևավորվում են անկյուններ, որոնցում տեղադրվելու են ծնողների համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրով: Հատուկ թղթապանակներով ներկայացվում են հակիրճ տեղեկատվական խորհրդատվություններ՝ մանկավարժի, հոգեբանի և բժշկի կողմից: Կան այլ թղթապանակներ, որոնցում դաստիարակները տեղադրում են ֆոտոնյութեր: Դրանց միջոցով լուսաբանվում է երեխաների մասնակցությունը մանկապարտեզի միջոցառումներին: Հատուկ ուշադրության են արժանի <<Խորհուրդ են տալիս ծնողները>> ընդհանուր խորագրով նյութերը (այստեղ մայրիկները և հայրիկները գաղտնիքներ են փոխանակում): Ներառված են նաև <<Նոր բուժման ձև գրիպից>>, <<Աղցանների բաղադրատոմսեր>>,<<Լավագույն տոնական սեղան՝ ծնողների մասնակցությամբ>> և այլ օգտակար խորհուրդներ:

Ժողովների անցկացման ուղենիշեր

- Ճանաչելով ընտանիքներին՝ դուք ավելի հեշտությամբ կհարմարվեք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին: Ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատանվել գոհունակությունից մինչև թերահավատություն: Նախապես իմանալով ժողովների նկատմամբ ծնողների վերաբերմունքի այս տարբերությունները՝

յուրաքանչյուր իրադրությունից դուրս գալու համար ձեզ ավելի պատրաստ կզգաք:

- Ժողովների մասին հայտարարությունից և ընդհանուր տեղեկատվությունից բացի՝ յուրաքանչյուր ծնողի կոնկրետ տեղեկություններ հաղորդե՛ք ժողովին առնչվող ձեր նպատակների մասին: Այդ կերպ նրանք մինչև ձեր հանդիպումը մտածելու բան կունենան: Ժամանակ հատկացրե՛ք ժողովի համապատասան միջավայրի ստեղծմանը:
- Ստեղծե՛ք ընկերական մթնոլորտ՝ թեթև հյուրասիրություն առաջարկելով: Ծնողների հետ քննարկե՛ք երեխային առնչվող սոցիալական, հուզական, կրթական, ճանաչողական և ֆիզիկական նպատակները: Բացատրե՛ք, թե ինչպե՞ս կարելի է հասնել դրանց: Նշե՛ք անհրաժեշտ ռազմավարություններն ու պլանները:

Ժողովներ վարելիս հարկվոր է ձգտել՝

- օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգալ, քանի որ մանկապարտեզը մանկավարժի <<տարածքն է>>,
- հաղորդակցվել ծնողների հետ՝ իրենց մակարդակին համապատասխան, խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից,
- շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա,
- ծնողներին առաջարկել հստակ մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը օգնել իրենց երեխաներին:

Ծնողների գնալուց անմիջապես հետո՝

- անհրաժեշտ է գրի առնել ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկություններն ու քննարկված հարցերը,
- եթե մանկավարժից պատասխան է ակնկալվում, ապա հարկավոր է պատասխանել՝ առանց հապաղելու,
- անպայման պետք է ապահովել հետադարձ կապը (հանձնարարականներ, այցելություն, երկտող ծնողներին...):

Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռնում: Տնային պայմաններն այցելուին թույլ են տալիս առավելագույնս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական արդյունավետ ծրագրերն սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է հենց ինքը՝ սովորողը:
Տնային այցելությունների ծրագրերը բովանդակային և մեթոդական առումով խիստ բազմազան են: դրանք իրարից նշանակալիորեն տարբերվում են ըստ այն հանգամանքի, թե այցելության նպատակը ծնո՞ղն է, երեխա՞ն, թե ընտանիքը:
Տնային այցելության կատարողի և ծնողի միջև փոխհարաբերությունները պետք է կառուցվեն համագործակցային սկզբունքով:
Կարելի է տնային այցելություններն այնպես կազմակերպել, որ ծնողի ներկայությունը քիչ կամ բոլորովին անհրաժեշտ չլինի: Սա հնարավոր է հատկապես այն դեպքում, երբ նպատակը տունը խմբասենյակին նմանեցնելն է կամ ուսումնական կենտրոնների հենքով մշակված ծրագիրը տան պայմաններում իրականացնելը: Այստեղ նույնպես կիրառվելու է երեխայակենտրոն մոտեցում, որը չի պահանջում ծնողների ներկայությունը:
Տնային այցելությունները մի յուրահատուկ ուղի է հարթում դեպի ընտանիք և բացառիկ տեղեկատվություն ապահովում ընտանեկան իրավիճակի մասին: Միևնույն ժամանակ պետք չէ ակնկալել, որ տնային այցելությունները կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ:

Ոչ պաշտոնական գրառումներ

Մանկավարժական կազմը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ: Դրանք կպարունակեն ընտանիքի անդամներին ուղղված տեղեկություններ՝ երեխայի կողմից որոշակի հմտություններ ձեռք բերման կամ իրականացված որևէ այլ գործունեության մասին: Կարելի է նաև այդ կերպ շնորհակալություն հայտնել ծնողներին ուսումնական հաստատությանն այս կամ այն ձևով աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղարկել երախտագիտություն կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ:

Անհատական գրառումների գրքույկներ

Այս գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակը փոխանցել ընթացիկ տեղեկատվությունը: Ընտանիքները կարող են մանկավարժներին նախազգուշացնել հատուկ իրադարձությունների, ինչպես օրինակ, ծննդյան տոնի, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների և այցելությունների մասին:

Պատի տեղեկատվական թերթեր

Պատի տեղեկատվական թերթն օգտակար է՝ ընտանիքների միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու առումով: Դրա միջոցով հնարավոր է ազդարարել ժողովները, հատուկ իրադարձությունները, ամենօրյա դասացուցակը, ընտանիքների համար նախատեսված միջոցառումները, ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձը:

Առաջարկությունների տուփ

Ծնողներին առաջարկում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին Ներկայացնել հատուկ տուփի միջոցով: Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը:

Նախադպրոցական հիմնարկներում պետք է գործեն նաև <<Վստահության հեռախոս>>, <<Մանկավարժի հյուրասրահ>>,<<Գաղափարների տոնավաճառ>>: Դրանք հաղորդակցության և համագործակցության ժամանակակից ձևեր են, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում (ընդ որում, նրանք աշխատում են որոշակի օրերի և ժամերի ընթացքում, ասենք՝ ամեն ամսվա առաջին շաբաթվա օրերից մեկը) նախադպրոցականների ծնողների հետ և օժանդակում նրանց ամենատարբեր հարցերում:
Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ՝ <<Ամենահամերաշխ ընտանիքը>>: Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու իրենց երեխաները:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք, կամ ընտանիք-դպրոց արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1. հետևողական, հատուկ, երկկողմանի հաղորդակցություն,
2. ծնողների ներգրավման բազմազան միջոցներ:

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնադրվելու է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն:
Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ և փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել:
Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողներն ու ուսուցիչները սերտորեն համագործակցում են ի շահ երեխաների բնականոն զարգացման:
ՈՒսուցիչները լինելու են նախաձեռնող և ուղիներ են փնտրելու երեխաների միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար:
Նրանք պետք է մտածեն ու մշակեն ընտանիքի անդամների հետ աշխատելու արդյունավետ ռազմավարություններ:

Մեր երեխաները՝ մեր ծերությունն են:
Ճիշտ դաստիարակությունը՝ մեր երջանիկ ծերությունն է:
Վատ դաստիարակությունը՝ մեր ապագա դժբախտությունն է,
մեր արցունքները, մեր մեղքը ուրիշ մարդկանց և հայրենիքի առջև:

Ա. Ա. Մակարենկո

Եզրակացություն

Երեխաներին, ծնողներին և մանկավարժներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնցում լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Մանկավարժների և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է մանկապարտեզի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այսպիսով մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ:

Եթե բոլոր ընտանիքներում ծնող-երեխա փոխհարաբերությունը կառուցվի սիրո, համերաշխության ու ներողամտության, միմյանց զիջելու և դիմացինի կարծիքը հաշվի առնելու սկզբունքով, ապա մեր երկրում երեխաները կլինեն զարգացած ու մարդասեր:

Եթե ընտանեական դաստիարակության հիմունքները կառուցված լինեն ազգային ավանդույթների և ժամանակակից նախադպրոցական մանկավարժության պահանջների ոգով, ապա հայ ընտանիքը կպահպանի իր ազգային դիմագիծը, և երեխաները կլինեն հայրենասեր: Նման սերունդները կապահովեն ամուր ընտանիք, իսկ կայուն ու ամուր ընտանիքն ազգի գոյապահպանման հիմքն է:

Գրականության ցանկ

1. <<Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր>> ծրագիր (5-6տ.) Երևան 2007թ.
2. <<Նախաշավիղ>> 3-4. 2002. (Ասյա Հովհաննիսյան)
3. <<Նախաշավիղ>> 1. 2013 (Սեդա Մելիքյան)
4. <<Նախաշավիղ>> 5. 2013 (Լալա Սմբատյան)
5. <<ՈՒսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>> Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան Երևան 2010թ.